

Տրամաբանական  
Տրամաբանական

BOOKMARK

Գեորգի Գոսպոդինով

Տրամաբանության  
Ֆիզիկան

վեՊ

Թարգմանությունը բուլղարերենից՝  
Գոհար Աբովյանի



ԵՐԵՎԱՆ  
2022

ՀՏԴ 821.163.2-31 Գոսպոդինով  
ԳՄԴ 84(4Բուլ)-44  
Գ 788

Գոսպոդինով Գեորգի  
Գ 788 Տրտմության ֆիզիկան: Վեպ / Գ. Գոսպոդինով; Թարգմանությունը  
բուլղարերենից՝ Գ. Աբովյանի.- Եր.: Newmag, 2022.- 264 էջ:

Վեպի հերոսը հին հունական դիցաբանական հերոսի՝ Մինոտավրոսի պես խճճվում է իր ընտանիքի պատմությունների լաբիրինթոսում: Այդ պատմության թելն անցնում է ոլորապտույտ միջանցքներով, մտնում անհամար սենյակներ, որոնցում միախառնվում են անցյալն ու ներկան, առասպելն ու փաստագրված իրականությունը: Թռչելով ժամանակաշրջանից ժամանակաշրջան, համադրելով ու հակադրելով իրարամերժ տեսակետներ՝ հեղինակը բացահայտում է արևելավրոպացիների մտածելակերպը, 2-րդ աշխարհամարտի հետևանքներն ու Բուլղարիայի կոմունիստական բյուրոկրատիայի դեմքը:

Անհավանական հուզիչ կամ անսովոր զվարճալի այս վեպը նոր տեսակի ընթերցանության փորձ է պարգևում: Ընթերցողը հետևում է արտասովոր պատումներին, ցատկում ժամանակաշրջաններով, խճողվում հերոսների ճակատագրերի մեջ և խճճվում ճիշտ այնպես, ինչպես վեպի գլխավոր խորհրդանիշը՝ Մինոտավրոսը՝ կյանքի ու հանգամանքների լաբիրինթոսում:

Այս վեպը կարեկցանքի և դրա անհետացման, մարդու մեջ փակված տխուր հրեշի մասին է:

ՀՏԴ 821.163.2-31 Գոսպոդինով  
ԳՄԴ 84(4 Բուլ)-44

ISBN 978-9939-884-59-2

Գեորգի Գոսպոդինով, «Տրտմության ֆիզիկան» © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ  
FIZIKA NA TAGATA © 2011, Georgi Gospodinov All rights reserved

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել THE WYLIE գրական գործակալության հետ կնքած պայմանագրով:



Co-funded by the  
Creative Europe Programme  
of the European Union

The book is published and co-funded by  
the Creative Europe Programme of the European Union

Գիրքը հրատարակվել է Եվրոպական  
Միության «Ստեղծարար Եվրոպա» ծրագրի  
համաֆինանսավորմամբ

The content of this book represents the views of the author only and is his/her sole responsibility. The European Commission and the Agency do not accept any responsibility for use that may be made of the information it contains.

Եվրահանձնաժողովը և Գործակալությունը որևէ պատասխանատվություն չեն կրում գրքում արտահայտված մտքերի համար:

## Բովանդակություն

	Էպիգրաֆ .....	9
	Նախերգանք .....	11
I	Տրտմության հացը .....	13
II	Ընդդեմ լքվածության. Մ.-ի գործը .....	57
III	Դեղին տունը .....	71
IV	Time Bomb (Բացել աշխարհի վերջից հետո) ....	113
V	Կանաչ տուփը .....	143
VI	Պատմությունների գնորդը .....	169
VII	Համաշխարհային աշունը .....	189
VIII	Տրտմության տարրական ֆիզիկան .....	221
IX	Վերջաբաններ .....	255
	Վերջաբան .....	259
	Շնորհակալություն .....	261

## Էպիգրաֆ

O mytho è o nada que è tudo.\*

*F. Pessoa, Mensagem*

Կան միայն մանկություն ու մահ: Եվ ոչինչ մեջտեղում...

*Գաուսարին, «Ընտրված ինքնակենսագրականներ»*

Աշխարհն այլևս կախարդական չէ: Քեզ լքել են:

*Բորիսես, 1964*

... ու ահա, մտնում եմ հիշողության դաշտերն ու ընդարձակ կացարանները, որտեղ անհաշվելի կերպարների գանձարաններն են...

*Սուրբ Ավգուստին, «Խոստովանություններ», Գիրք X*

Միայն անցողիկն ու ժամանակավորն արժի գրառել:

*Գաուսարին, «Լքյալները»*

Ուզում եմ թռչել, լողալ, հաչալ, հառաչել, ոռնալ: Կուզենայի ունենալ թևեր, կրիայի պատյան, կեղև, ծուխ բաց թողնել, ունենալ կնճիթ, ձկել իմ մարմինը, տարածվել ամենուր, լինել ամեն ինչի մեջ, բուրմունքներ տարածել,

\* Առասպելը ոչինչ է, որն էլ ամեն ինչ է: (Ֆ. Պեսոա, Մենսագեմ)

աճել բույսերի նման, հոսել ջրի պես... ներթափանցել ամեն մի ատոմի մեջ, սուզվել նյութի խորքը. լինել հենց ինքը՝ նյութը:

Գուստավ Ֆլորեր, «Սուրբ Անտոնի գայթակղությունը»

...mixing  
memory and desire...

*T.S. Eliot, The Waste Land*

Մաքուր ժանրերն ինձ շատ չեն հետաքրքրում: Վեպն արիացի չէ:

Գաուսպին, «Վեպ ու ոչինչ»

Ընթերցողն ազատ է այս գիրքն ընդունել որպես վեպ...

Էռնեստ Հեմինգուեյ, «Տոն, որ միշտ քեզ հետ է»

## Նախերգանք

Ծնվել եմ 1913-ի օգոստոսի վերջին՝ որպես արական սեռի մարդկային արարած: Հստակ ամսաթիվը չգիտեմ: Մի քանի օր սպասել են համոզվելու համար, որ ողջ կմնամ, հետո գրանցեն: Այդպես է եղել կարգը: Դաշտերում ամառային աշխատանքներն ավարտվել են, կովը ծնել է, և մարդիկ զբաղվել են իրենց հոգսերով: Սկսվել է համաշխարհային պատերազմը: Մեկը մյուսի հետևից հիվանդացել եմ մանկական տարբեր հիվանդություններով՝ ջրծաղիկ, կարմրուկ և այլն:

Ծնվել եմ արևածագից երկու ժամ առաջ՝ որպես գինու ճանճ: Մահանալու եմ այս երեկոյան՝ մայրամուտից հետո:

Ծնվել եմ 1968-ի հունվարի 1-ին՝ որպես արական սեռի մարդկային արարած: Սկզբից մինչև վերջ մանրամասն հիշում եմ ամբողջ 1968 թ.-ը: Ոչինչ չեմ հիշում այժմ ընթացող տարուց: Նույնիսկ թիվը չգիտեմ:

Միշտ եմ ծնված եղել: Դեռ հիշում եմ սառցե դարաշրջանի սկիզբն ու Սառը պատերազմի ավարտը: Վերացող դինոզավրերի տեսարանը երկու ժամանակաշրջանում էլ ամենաանտանելի երևույթներից է, որ երբևէ տեսել եմ:

Դեռ չեմ ծնվել: Սպասում են ինձ: Մինուս յոթ ամսական եմ: Չգիտեմ՝ այդ բացասական ժամանակն ինչպես են հաշվում արգանդում: Մեծ եմ (դեռ չգիտեն սեռս), ձիթապտղի չափ, 1.5 գրամ եմ կշռում: Պոչս աստիճանաբար հետ է քաշվում: Կենդանին արդեն հեռանում է իմ ներսից՝ անհետացող պոչով հրաժեշտ տալով: Երևի ընտրվել եմ որպես մարդկային արարած: Այստեղ մութ է ու հարմարավետ, կապված եմ ինչ-որ իրի, որը շարժվում է:

Ծնվել եմ 1944-ի սեպտեմբերի 6-ին՝ որպես արական սեռի մարդկային արարած: Պատերազմական շրջան էր: Մեկ շաբաթ անց հայրս գնացել էր ռազմաճակատ: Մորս կաթը չորացել էր: Մի չբեր կին ցանկացել է ինձ որդեգրել, բայց չեն տվել: Գիշերներ շարունակ սովից լացել եմ: Գինու մեջ թաթախած հաց են տվել, որ ծծեմ որպես ծծակ:

Հիշում եմ ինձ՝ ծնված որպես մասուրի թուփ, կաքավ, գինկգո երկբըլթակ, խխունջ, հունիսյան ամպ (հիշողությունս կարճ է), մանուշակագույն



աշնանային շափրան՝ Խալենզեի եզրին, վաղահաս բալ՝ ուշ ապրիլյան  
ձյունից սառած, խաբված բալենու ճյուղին...

Մենք ենք:



# Տրտմութեան հացը

## Հրաշագործը

Եվ այդ ժամանակ մի հրաշագործ գլխիցս թոցրեց կեպին, մատները միջով անցկացրեց և ա՛յ այսպիսի անցք բացեց: Լացեցի. ինչպե՞ս եմ տուն գնալու պատռված կեպիով: Նա ծիծաղեց, փչեց վրան, և այն ինչ-որ մի հրաշքով դարձյալ ամբողջական դարձավ: Ա՛յ քեզ հրաշագործ:

«Պարզապես աճապարար է, պապի՛կ», – ասացի ինքս ինձ:

«Մի ժամանակ հրաշագործներ էին, – ասում է պապս, – հետո աճապարարներ դարձան»:

Բայց ես արդեն այնտեղ եմ, 12 տարեկան, երևի թե 1925 թ.-ն է: Ձեռքիս մեջ սեղմում եմ քրտնած մետաղադրամը, զգում եմ ծայրերը: Առաջին անգամ եմ մենակ տոնավաճառ գնացել՝ գումարը ձեռքիս...

*Էս կողմ, ժողովուրդ... Արի՛, փե՛ս պիթոն օձին, գլխից մինչև պոչ երեք մետր է, մի էդքան էլ պոչից գլուխ...*

Ա՛յ քեզ բան, այս ի՞նչ օձ է, որ վեցմետրանոց է... Է՛յ, սպասիր, ո՛ր առանց փողի, տո՛ր այս կողմ մետաղադրամը... Բայց մոտս միայն հնգանոց է, մի օձ տեսնելու համար չեմ տա...

Դիմացի վաճառասեղանին շրթներկեր, կավ ու մազի ներկ են վաճառում:

*Բեղերի համար նեերկ, անխելքների համար խելք...*

Իսկ այս մարդը տեսնես ո՞վ է, որն իր շուրջն է հավաքել թաշկինակով արցունքները սրբող կանանց:

*...Պապերազմում գերությունից հետո Նիկոլչոն փուն է վերադառնում ու փեսնում իր հարսնացուն ուրիշի հետ է ամուսնացել: Նա ջրհորի մոտ փեսնում է հարսնացուին ու գլուխը կտրում, և օդում պահելով՝ ասում է՝ է՛հ, Նիկոլչո՛, այս ի՞նչ արեցիր... Դե հիմա լացեք... Ու կանայք սկսում են հոնգուր-հոնգուր լաց լինել... Եվ վերցրե՛ք երգարանը, որ հասկանաք, թե ինչ սարսափելի սխալ է գործել՝ անմեղ հարսնացուին սպանելով... Սա էլ,*

փաստորեն, երգարան վաճառողն է. տեսնես այս ի՞նչ սխալի մասին է խոսքը...

Մարդիկ հրում են ինձ, ես ամուր սեղմում եմ մետաղադրամս: Հայրս այն ինձ տալով՝ զգուշացրել էր՝ *տե՛ս հա, չգողանան:*

*Սիրոպ. Հակոբի սիրոպ.* գրված է առաջարկվող օջարակի նման մեծ, վարդագույն տառերով: Թուքս կուլ տվեցի: Խմե՛մ, թե՛ չէ...

*Համեղ շաքարաքլորներ...* սատանան ծեր հայուհու կերպարով գայթակղում է ինձ: *Ում ծանոթ է այդ համը, այստեղ է կանգնում...* Դե հիմա ի՞նչ անես. գնես Հակոբի օջարա՛կը, թե՛ ծեր հայուհու շաքարաքլորը: Կանգնած եմ մեջտեղում, թուքս կուլ եմ տալիս ու ոչ մի կերպ չեմ կարողանում կողմնորոշվել: Իմ միջի պապիկը չի կարողանում որոշել: Ահա թե որտեղից է գալիս այս անվճռականությունը, որն ինձ տանջելու է ամբողջ կյանքիս ընթացքում: Տեսնում եմ, թե ինչպես եմ նստած այնտեղ՝ նիհար, երկարոտն, քերծված ծնկով, կեպին գլխիս, որը շուտով հրաշագործը պետք է ծակեր, բերանս բաց՝ գայթակղված շուրջբոլորը կատարվող հրաշքներով: Մի փոքր հեռանում եմ և ինձ տեսնում թռչնի թռիչքի բարձրությունից. շուրջս բոլորը շարժման մեջ են, ես կանգնած եմ, պապս էլ է կանգնած, երկուսս մեկ մարմնի մեջ ենք:

Հո՛ւպ, մի ձեռք գլխիցս թռցնում է կեպին: Հասել եմ հրաշագործի տաղավարին: Հանգի՛ստ, չեմ լացի, գիտեմ, թե ինչ է լինելու: Ահա և հրաշագործի մատը կտորի մյուս կողմից, Աստվա՛ճ իմ, ա՛յ քեզ անցք: Շուրջս հավաքված ամբոխը պոռթկում է ծիծաղից: Ինչ-որ մեկն այնպես է հարվածում մերկ պարանոցիս, որ աչքերս արցունքոտվում են: Ես սպասում եմ, բայց հրաշագործը կարծես մոռացել է պատմության շարունակությունը, ծակված կեպիս մի կողմ է թողնում, ձեռքը մոտեցնում բերանիս, պտտում այն, և ա՛յ քեզ հրաշք, բերանս փակված է: Չեմ կարողանում բացել: Շուրջս հավաքվածներն ուր որ է կուշաթափվեն ծիծաղից: Փորձում եմ ինչ-որ բան ասել, բայց միայն մռնչոց է դուրս գալիս կոկորդիցս: Մըըըը՛...մըըը՛...

*Հարի Ստոկը եկել է տոնավաճառ, Հարի Ստոկը վերադարձել է Ամերիկայից...*

Մի հսկա տղամարդ՝ ներկայանալի կոստյումով, կտրում-անցնում է ամբոխի միջով: Բոլորը հարգանքով ողջունում են նրան: Հարի Ստոկը՝ նոր Դան Կոլովը, իսկական բուլղարական երազանք: «Նրա ոտքերի հըմ-

տությունն ու ուժը մեկ միլիոն ամերիկյան դոլար արժեն», – ասաց ինչ–որ մեկը: Հակառակորդին ոտքերով անշարժացնում է, խեղդում, և նա այլևս չի կարողանում տեղաշարժվել: «Նրան խեղդողակ են անվանում», – շնջաց մեկ ուրիշը: Հստակ սկսում են պատկերացնել մեկը մյուսի հետևից թափված հսկաներին ու զգում, թե ինչպես են շնչահեղձ լինում Հարի Ստոնի թակարդում: Շտապում են հեռանալ այդտեղից, իսկ ամբոխը գնում է նրա հետևից: Եվ այդ ժամանակ թիկունքիցս՝ ինչ–որ տեղից լսում են.

— Այս կոո՛ղմ, ժողովուր՛դ... Ցլի գլխով երեխա՛: Մի չտեսնված հրաշք: Փոքրիկ Մինոտավրոսը Լաբիրինթոսից, ընդամենը 12 տարեկան... Հինգ լևով կարող եք ընդամենը մեկ անգամ ուտել, խմել ու վերջ, բայց նույն հինգ լևի դիմաց կարող եք ամբողջ կյանքում պատմել, թե ինչ եք տեսել:

Եթե չի դավաճանում պապիկիս հիշողությունը, նա այստեղ չի եղել: Բայց հիմա այդ հիշողության մեջ ես եմ այս նույն տոնավաճառում, ես նա եմ և անհագուրդ ցանկություն ունեմ ներս մտնելու: Տալիս եմ ձեռքիս հընգանոցը, հրաժեշտ տալիս պիթոն օձին ու նրա խաբուսիկ վեց մետրին, Հակոբի սառը օշարակին, գերի Նիկոլչոյի պատմությանը, ծեր հայուհու շաքարաքլորներին, Հարի Ստոնի խեղդողակին ու նետվում դեպի վրանը՝ Մինոտավրոսի մոտ:

Այստեղից պապիկիս հիշողության թելը բարակում է, բայց չի կտրվում: Նա պնդում էր, որ չի համարձակվել ներս մտնել, սակայն ես մըտնում եմ: Լռում է: Որովհետև ես այստեղ եմ՝ նրա հիշողությունում, կարո՞ղ եմ արդյոք շարունակել, եթե նա ինձնից առաջ այստեղ չի եղել: Չգիտեմ, բայց ինչ–որ բան այնպես չէ: Արդեն լաբիրինթոսում եմ, որը, պարզվում է, մի մեծ կիսամութ վրան է: Այն, ինչ ես տեսնում եմ, այնքան տարբեր է սևսպիտակ նկարազարդումներով հին հունական առասպելների իմ սիրած գրքից, որտեղ առաջին անգամ տեսա Մինոտավրոս հրեշին: Կարծես ոչ մի ընդհանուր բան չկա նրանց միջև: Այս Մինոտավրոսն ամենևին էլ սարսափելի չէ, ես կասեի՝ տխուր է: Մելանխոլիկ Մինոտավրոս է:

Վրանի մեջտեղում մոտ հինգ–վեց քայլ երկարությամբ ու մարդկային հասակից մի քիչ բարձր երկաթյա վանդակ է: Մետաղե բարակ ձողերը սկսել են ժանգից մգանալ: Ներսում՝ մի ծայրում, կա ներքնակ ու եռոտանի աթոռակ, իսկ մյուսում՝ ջրով լի դույլ ու թափված ծղոտ: Մի անկյունը մարդու համար է, մյուսը՝ գազանի: